Հայտարարություն

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Հավելված N 80
Հաստատված է
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 9-ի N 100-Ա հրամանով
06.02.2020թ.N 81-Ա և 25.02.2020թ.N 135-Ա հրամանների փոփոխ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) արտաքին կապերի և սփյուռքի վարչության (այսուհետ՝ Վարչություն) սփյուռքի հետ կապերի բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ) (ծածկագիրը՝ 18 -34.7-Մ2-6):

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան 3, Կառավարական շենք N2

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) իրականացնում է սփյուռքի հետ համագործակցության մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված ծրագրերի մշակումը և մասնակցում է դրանց իրագործման ու գնահատման աշխատանքներին.
2) իրականացնում է ՀՀ-ում մշակութային գործունեության սփյուռքի մասնակցության ծրագրերը, մասնակցում է դրանց մշակման և գնահատման աշխատանքներին.
3) իրականացնում է մշակույթի ոլորտում սփյուռքի հետ համագործակցության տեղեկությունների հավաքագրման և վերլուծության աշխատանքները.
4) իրականացնում է սփյուռքում մշակութային փառատոնների և այլ մշակութային ու երիտասարդական ծրագրերի իրագործումը.
5) իրականացնում է սփյուռքում մշակութային գործիչների, բարերարների և այլոց խրախուսման և պարգևատրման գործընթացը.
6) իրականացնում է սփյուռքի մշակութային, երիտասարդական, բարեգործական և եկեղեցական հաստատությունների հետ կապերի հաստատումը, համագործակցության զարգացմանն ուղղված աշխատանքները.
7) իրականացնում է մշակույթի ոլորտում սփյուռքի հետ համագործակցության միջնաժամկետ ծրագրերի մշակման աշխատանքները.
8) իրականացնում է մշակույթի ոլորտում սփյուռքի հետ համագործակցության հուշագրերի, պայմանագրերի և համաձայնագրերի նախագծերի Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի, միջազգային պայմանագրերի և համագործակցության հուշագրերի նախագծերի մշակումը,
9) պատրաստում է մշակույթի ոլորտում սփյուռքի հետ համագործակցության եզրակացություններ, ընթացիկ և տարեկան հաշվետվություններ.
10) իրականացնում է սփյուռքում մշակութային գործիչների և պատվիրակությունների Հայաստան այցելությունների պլանավորման աշխատանքները.

11) իրականացնում է մշակութային մասով համահայկական համաժողովների, սեմինարների, գիտաժողովների, խորհրդակցությունների ծրագրման, կազմակերպման և մշտադիտարկման աշխատանքները.
12) իրականացնում է մշակույթի և երիտասարդության բնագավառում սփյուռքի հետ կապերի հաստատմանն ու ընդլայնմանը, համագործակցության զարգացման գործընթացին.
13) մասնակցում է մշակութային քաղաքականության մշակմանը.
14) մասնակցում է կրթության, գիտության, մշակույթի և երիտասարդության ոլորտում սփյուռքի կարիքների բավարարմանը և համագործակցության զարգացմանը ուղղված զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակմանը.
15) մասնակցում է սփյուռքի մշակութային կարիքների բացահայտմանը, բավարարմանն ուղղված ծրագրերի մշակմանը, իրագործմանը և գնահատմանը.
16) մասնակցում է սփյուռքում մշակութային կյանքի աշխուժացմանը, ազգային ինքնության պահպանմանը և զարգացմաննն ուղղված ծրագրերի մշակմանը, իրագործմանը և գնահատմանը:

Իրավունքները՝

- ստանալ համապատասխան տեղեկություն ՀՀ պետական մարմիններից, համապատասխան հաստատություններից և կազմակերպություններից.
- ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ համապատասխան շահագրգիռ մարմիններից.
- ուսումնասիրել և վերլուծել մշակույթի ոլորտում սփյուռքի հետ համագործակցության խնդիրները.
- իրականացնել մշակույթի ոլորտում սփյուռքի հետ համագործակցության ծրագրերի գնահատում.
- ներկայացնել առաջարկություններ մշակույթի ոլորտում սփյուռքի հետ համագործակցության զարգացման ծրագրերի մշակման ուղղությամբ:

Պարտականությունները՝

- ուսումնասիրել մշակութային և երիտասարդության ոլորտները կարգավորող իրավական ակտերը և ընթացակարգերը.
- պատրաստել տեղեկանքներ, հաշվետվություններ և զեկուցագրեր սփյուռքի հետ համագործակցության ընթացիկ գործունեության մասին,
- պատասխանել սահմանված կարգով և ժամկետներում քաղաքացիների դիմումներին, այդ թվում՝ էլեկտրոնային հարցումներին.
- ապահովել սահմանված կարգով և ժամկետներում մշակութային գործիչների և համույթների այցելություններ Հայաստան և Հայաստանի մշակութային գործիչների և համույթների այցելություններ սփյուռք.
- ապահովել մշակույթի և երիտասարդության ոլորտում սփյուռքի և նրա կառույցների հետ կապերի հաստատումը, ամրապնդրումը և զարգացումը.
- ներկայացնել իր Բաժնի գործառույթներից բխող առաջարկություններ՝ հիմնախնդիրների լուծման և համագործակցության զարգացման ուղիների վերաբերյալ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ միջազգային կապեր (միջազգային հարաբերություններ) բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում

3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում,վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում
5. Ժամանակի կառավարում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատաքի կամակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորություններ

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4. Շփումներ և ներկայացուցչություն

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում համապատասխան մարմնի և կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: